





— Սիրելիս, գիտե՞ս, նշանածդ...  
— Է՛յ...

— Յանուն բարեկամութեան՝ քեզի բան մը պիտի ըսեմ. նշանածդ չկայ. անունը թաղապետութեան ցանկին մէջ արձանագրուած է...

★ Պիտի կարգուիք. ձեր ամուսնութեան ամբի իրիկունը չիտակ ճամբան, կը հանդիպիք ձեր աներին որ բաղիարը մը կը հրամայէ ձեզի: Կ'ընդունիք հրաւերը և «սխալ» մը կ'ապսպրէք:

Բայց ի՞նչ բարեկամը վրայ կը հասնի:

— Չէ՛ սիրելիս, օղի խմել չըլլար, վաղը պիտի կարգուիս նէ՛. — Կառսո՛ն, բաստա մը բեր:

★ Հազիւ հազ յաջողեցաք ամուսնանալ, կը ջանիկ էք. ձեր կինը առաքինութեան հրեշտակ մըն է, որ քանթոփլաներ կը բանի ձեզի և ձեր ամէն խօսքերուն յիմարներու պէս կը խնդայ:

Ձեր բարեկամը կը հասնի վրայ. — Գիտե՞ս, սիրելիս, կնիկդ...

— Է՛յ...

— Գորգիբիդ հետ քեզի կը խաբէ կոր, մէկտեղ ետխաղամիջ ըրի... Աստուած վկայ, աչքերովս տեսայ:

★ Գիրք մը կը հրատարակէք: Ամէն մարդ կը հաւնի. քննադատները կը սքանչանան և դուք մեծ հաճոյքով կ'ըմբռնենք չուսյուած գովեստները:

Բայց ձեր բարեկամը չուշանար գալ.

— Տեսարժ խոն Ալապուճուկեանի գրածը, թէ՛ գիրքդ և թէ՛ անձը խայտառակեր է, նա՛, առ կարգա:

★ Մ'ըջինի վրայ կոխած մարդ չէք և երբե՛ք ձեր խելքէն չէ՛ անցած մէկուն հետ ձեռկուիլ:

Բարեկամիդ կուգայ քովերնիդ:

— Գիտե՞ս, այնինչը քեզի համար սա՛նկ սա՛նկ ըսաւ, պէտք է երթաս լաւ մը ապասկես:

Կ'երթաք մարդը ապասկելու, բայց անիկա ձեզի... ձեռի տակ կը մնայնէ:

Այն ատեն ձեր բարեկամը ձեր գաղափարն վրայ դամբանական մը կ'արտասանէ:

ԲԱՐԵԿԱՄ

Ա Պ Տ Ա Կ Ն Ե Ր

Ձա՛րկ, բայց մտիկ ըրէ՛:

Սիւլվիօ Րիչչին իբրև անառչիսք ձերբակալուած է... Բերայի ոտիկանութեան կողմէ: Ուտիկանութիւնը սակայն հիմա կը փնտռէ նաև Ալֆօնս Վոկանը: Ի՛նչ երջանկութիւն, և ի՛նչ վսեմ ազատութիւն: Սիւլվիօ Րիչչի հին ռեժիսին օրով իբրև յեղափոխական մահուան կը դատապարտուի... հիմայ որ Պոլսոյ մէջ ըլլալը կը լսեն, հին վրէժնին լուծելու համար, զայն կը ձերբակալեն և բանտ կը նետեն՝ հասարակ մարդու մը պէս և ինքզինքնին արդարացնելու համար... անառչիսք է կ'ըսեն: Գէշ հաշիւ չէ. այս սխալեմով բանտերը դարձեալ Հայերով կրնան լեցնել... Ազատ արձակելու է Սիւլվիօ Րիչչին:

★

Տիրայր վրդ. Հնչակեան չէ՛. Տիրայր վրդ.ը չին ճանչնար. արգէն Տիրայր վր.ը ճանչցողը վրայէն բան մը վրայ կուտայ. Տիրայր վր. Կրօն. Ժողովի քարտուգար չէ. Տիրայր վր. այլևս քարողիչ չէ. հետևաբար Տիրայր վրդ. ... զէրօ է:

★ Թանիկի մէջ Հիւսէյին Ճահիտ մամուլի ազատութիւնը կը պաշտպանէ, բեկով թէ՛ «արդեօք նախարարները կ'ուզեն որ հին բռնակալութիւնը սկսի»: Հին օրերը կ'երթան: Չեմ յուսար, որովհետև մեր արդի նախարարները խելք ունին՝ կը կարծենք:

★ Ներքին գործոց նախարարի փոխանորդը երկդիմի պատասխան մը տուեր է հեռագրական վերատեսչութեան այն հարցումին թէ՛ Կայս. Պալատան Ա. քարտուղարութիւնը արտօնուած է շիֆթե հեռագիրներ ուղղել դեսպաններուն. ներքին գործոց նախարարութիւնը ո՛չ «այո՛» կ'ըսէ և ո՛չ ալ «ո՛չ». հարցումը կ'երկորդուի. միշտ խուսափողական. կ'երրորդուի այս անգամ. ներքին գործոց նախարարը բնաւ չը պատասխաներ: Ա.Ֆէրիմ:

★ Շիրքէթի Սոյրիէն ասկէ վերջը ականջները պիտի մաքրէ եզեր և այս մաքրելուն հետևանքով պիտի լսէ... ուղեորներուն գանգամները: Ազատութեան ամէն բան ըլլալը գիտէինք, բայց ականջի մասնապէս ըմբռնել ըլլալը չէինք գիտեր:

★ Հին սէփիմէն մնացած Մեծ Եպարքոս Թէրիտ փաշա, կը գրէ Ենեի կազեթա, մետաքսի գործ կ'ընէ այժմ: Ասկէ առաջ հետևեալ հատուածը պարունակող նամակ մը գրկած է Րաթիպ փաշայի. «դրկուած մեծասեղեկները առի, վերջին ծայր գոն եղայ. հետևաբար կը ջանակոր երկարուողին Մեհիսեհեհե անդին չհրկարածադուի. քայց կայսերական փափաք՝ անպահապան երկարածադուի ըլլալուն, Տե՛ՄԵՆԻՔ, ԱՅՄ ՄՍՄԻՆ «ԲԼԱՆ» ՄԸ ՊԻՏԻ ՄՏԱՆՍԵՆՔ»: Բլան հէ՛. մետաքսի փոխարէն գծին արգելք յարուցանել... ամբէրիմ երեւիթանի քանտիստ:

★ Սիլվետար Սիլվետրոյ՝ Համբարձումին բազոտատան մէջ մէկ երկու շաբաթէ ի վեր կարգ մը մարդիկ որոնք ճիշդ մարդու կը նմանին — խորհրդակցութիւններ կը կատարեն Ազգ. երեւիթոսան ըլլալու հետք: ԾԱՂԻԿ. — Քէյֆէրուուն քէհեան չենք ա՛. կրնան նոյն իսկ նախարարութեան իր քանտիստ ներկայացնել ինքզինքնին:

★ Երեսուզէմի Տ. Յարութիւն Պատրիարքը քաջատող է. կը քայէ, կ'ուտէ, կը խմէ, մարմնամարդ կ'ընէ և օրը չորս անգամ պատարագ վազելու մրցումներու կը մասնակցի: Կ'ըսէին, դեռ երկու ամիս առաջ, Արքի Մուպահեմեան — Արքանամ Այժ

վազեան և Բնկ.: Սակայն այսօր Յարութիւն Պատրիարք իր փաստաբաններուն ըսածը ինք կը հերքէ ըսելով թէ՛ «իր ձերութեան օրերուն մէջ օժանդակելու համար օգնականի մը պէտք ունի»: Կ'առաջարկեն օգնական ներկայացնել՝ Մուպահեմեան Արքի և Այվազեան Արքանամ Էֆ.ները: Գէշ գործ չէ. բայց հիւանդապահութեան հասկնալու է:

★ Ռուս Սինօղը երթալով իր րաւասութեան սահմանները կ'ընդարձակէ: Այս օրերս ալ Թոլսթոյի գէմ չըջարեւական մը հանած է: Նոյնոյն Վրեմիա ծագելով Սինօղը կ'ըսէ թէ՛ քիչ կը մնայ որ Աստուածային արդարութիւնն ալ իրեն կնթակայ ցոյց պիտի տայ: Ո՛ր դարուն մէջ կ'ապրինք, բարեկամներ՝ սրբեղէ՛ք քիչ մը ձեր ակնոցներուն ապակիները:

★ Պէշիկթաշի Թաղականները, կը գրեն նոյն թաղէն, մէկ մէկ բռնակալներ եղեր են: Ի՛նչ ըսել կ'ուզեն. ո՛ր իրաւունքովին հին սէփիմէն վաճիկ եղանակով կը վարուին թաղեցիներուն հետ: Արդեօք Պէշիքթաշի մէջ ըլլալուն համար է որ... բռնակալութի հովեր կ'առնեն:

★ Սիլվետարցի Հայ օրիորդ մը ասկէ առաջ ի նոյաստ Վարազայ վանքին շինութեան՝ 130 ոսկի կը հանգանակէ: Սակայն այժմ յիշեալ օրիորդը կը լսէ թէ Օրմանեան այդ դրամէն միայն 300 դր. զրկած է այդ վանքին նորոգութեանը համար: Ազնիւ օրիորդ, ինչո՞ւ այդքան իրար կ'անցնիս. երբ 300 դր.ը զրկած է Վարազայ, ըսել է 127 ոսկին ալ զրկած է... իր ունեցածներուն քով:

★ Սուլթանեան Էֆ. է կը խնդրուի որ խորհրդատուան հրամայէ, կըսէ Մանգուլի: Բնականաբար Մանգուլի բան մը գիտէ, հետևաբար մենք ալ կը խնդրենք որ մեր խորհրդատուան ալ հրամայէ:

★ Հրձիգները կը շտաման եղեր. հետևաբար հրդհներուն առաջը առնելու պաշտօնով մասնավորով մը պիտի կազմուի: Յանձնաժողով մըն ալ պիտի կազմուի հրդհները մարելու համար: Հիմայ արգէն ուրիշ դործ չունինք. մասնախումբ, յանձնախումբ, մասնավորով, յանձնաժողով կը կազմենք: Կազմարարները կ'երևի գործերու այս առատութիւնը տեսնելով գինները պիտի բարձրացնեն:

★ Կիրակի օր ոսնարչաւ մը պիտի կողմակերպուի Պոլսոյ փողոցներուն մէջ: Ներկայ պիտի գտնուին Գաղաքապետութեան բոլոր պաշտօնականները: Մրցանակը պիտի շահի այն անձը որ կարող պիտի ըլլայ՝ առանց գետին իյնալու՝ Եի. քսէք գալտըրը մէն կամ Չաքմագճըլարէն, և կամ վերջապէս Պոլսոյ մէկ դառիվերէն վեր ելլել:

★

Ղալաթիոյ տ. Գարեգին քահանան և Որդին (հայր և որդի) կըսեն թէ (երկձայն) իրենք մարդ աքսորել տուած չեն. ընդհակառակը իրենք աքսորուած են (այս վերջին պարագան իրենց նամակին մէջ չը կար, բայց ես թօժափ ըլլալու համար աւելցուցի): Ի՛նչ կրնանք ըսել տ. հայր, դուք ձեր խղճին հետ կարգադրեցէք հաշիւը և փակեցէք խնդիրը:

★ Իզմիրի պատուելին Փառնակ Իսկէնտէրեան ճառ մը խօսեր է և «այդ անձը տեսնել կուզենք» պառագեր է ժողովուրդը և ձեռամբարձ տարեր է: Եղիա Մարգարէին ուշադրութեանը կը յանձնենք այս օրոյն օրնագ մարդոց երկինք համբառնալու պարագան:

★ Կայսրը՝ 400,000 ոսկի նուիրած է պետական գանձուն: Թանիկ կ'ըսէ թէ՛ «ուշագրութիւն ընելու է որ չիւրիկ չարիս և անարժէք կալուածներ չը գարծուին պետական գանձուն վրայ»: Ընողները խստիւ պէտք է պատեւ, կաւելցնէ Թանիկ որուն կը ձայնակցինք. Ս.մէն:

★ «Շատ խորհելու, քիչ խօսելու է» կ'ըսէ Օր. Եւտոքսի Դուսիկեան երէկի Սուրհանդակի մէջ: Շատ իրաւունք ունի շնորհալի օրիորդը: Իր ըսածներուն կը ձայնակցիմ: Հիւանդանոցի ուսանողները սակայն չափը անցընելու չեն. ամէն բան — իրենք շատ աղէկ գիտեն — չափ մը ունի: Մարդ իր սեռակիցին տրժանապատուութիւնը վիրաւորելու համար կը մտածէ նախ, ո՛ւր մնաց փափուկ սեռին պատկանող մը վիրաւորել, որ օգտակար կըլլար և պիտի ըլլար որոշակիներուն: Օր. Եսթեր Պոլոսեանը, Օր. Դուսիկեանի ըսածին պէս, կարծեմ կրնար ուրիշ տեղ մը աւելի լաւ պայմաններով պաշտօն գտնել, բայց իբրև դարգացած եւ լուրջ ազջիկ որրանոց մտաւ. արդ՛ ինչո՞ւ վշտացնել:

★ «Կեղքոնական վարժարանը ե՛րբ պիտի բացուի» կը հարցնեն մեզի: Մուպահեմիւն, կը պատասխանէ Խնամակալութիւնը՝ տեսնելով որ օրէ օր գաղթականները կաւելնան և Կեղքոնական վարժարանը... Կեղքոնական Օթէլի մը կը վերածուի:

★ Մկրտիչ Մելիքեան իր առած կաշառքները ետ չի վերադարձներ, ինչպէս գրեցինք, այլ... ետ կ'առնեն: Կարապետ Մարգարեան անուն շնորհալի անձը ան հին բարի օրերուն՝ Օրմանեանի քով Մելիքեանը բարեխօս կարգած էր և այս նպատակով ալ գորդ մը նուիրած էր անոր: Մեր կարապետը տեսնելով Օրմանեան զայսինքնին անկուր մը և խորհելով որ ասկէ վերջ յոյս չ'մնայ անոցմէ, ետ կ'առնէ Մելիքեանին նուիրած գորգը. հիմակ ալ... ուրիշ կաշառակերի մը նուիրելու համար զայն: Այս հաշիւով Օրմանեան և իր արրանեակները առանց գորգի պիտի մնան:

«ՎԱՂԸ ԿԱՎՈՇ»  
ԱՐՏՈՒՆՏԵՐ Ա. ՍԱԳՍԵՆ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳՍԵՆ

### ՓԱՆԱԳԱՇԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Լեզուագիտական եւ Գեղարուեստական, Գիշերօթիկ եւ Յերեկեայ  
Կ. Պոլիս, Գառը Գիւղ, Մէօհիւրտար ճատտէսի  
Ծրոյ Տարեօրջան

Վարժարանս Գիշերօթիկ Հաստատութիւն մըն է եւ աղջկանց խնամ-  
եալ եւ հիմնական կրթութեանը նուիրուած է լեզուագիտական եւ գեղար-  
ուեստական ուղղութեամբ:  
Գիշերօթիկ եւ Յերեկեայ աշակերտունեաց համար հանգստաւէտութեան  
եւ առողջապահիկ ամէն միջոց խորհուած է:  
Ա.Չ.Մ.Յ.Ի.Ն. ուսումնարանէ եւ գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ  
զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Յոսաներէն, Անգլիերէն  
եւ Թուրքերէն լեզուները, մասնագէտներու ձեռքով:  
Մասնաւոր խնամքի եւ հոգածութեան առարկայ է Ֆրանսերէն եւ Անգ-  
լիերէն լեզուաց Խօսելալարութիւնը (քոնսրխի): Գ.Մ.Շ.Ա.Կ. եւ ՋՈՒԹԱ.Կ:  
Գիշերօթիկներու համար կատարեալ սնունդ եւ ընտանեկան անթերի  
խնամք:  
Աշակերտաց վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 1 Բշ.:

Տեսչուհի Լիմնադիր-Տնօրէն  
ՀԻՒՐԻԻՔԵԱՐ ՓԱՆԱԳԱՇԵԱՆ Բ. Գ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ

### ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Ի ԲԱՆԱԿԱՆ ԹԻ  
52 Բ Գ Տ Ա Բ Ե Շ Բ Ձ Ա Ն

Վարժարանս կը բացուի 1/1 սեպտ. 1908, միևնոյն ուղղութեամբ  
եւ ծրագրով:  
Վարժարանս ունի արդի երկրորդական դպրոցներուն (Ecole se-  
condaire moderne Realschule) ծրագիրը, միջալայրիս պիտոյիցը  
յարմարցուած:  
Լեզուներ. — Հայերէն, Տաճկերէն, Գերմաներէն, Գաղղիերէն, Անգ-  
լիերէն:  
Գիտութիւններ. — Ուսողական, բնագիտական, բնապատմական, պատ-  
մական, կ'աւանդուին Գաղղիերէն եւ Գերմաներէն լեզուներով:  
Առեւտրական. — Աշխարհագրութիւն, հաշուաւարութիւն, թղթակցու-  
թիւն, Գաղղ., Գերմ. եւ Անգլ.:  
Ուսուցիչք. — Ներքին եւ արտաքին 33 ուսուցիչ կը դասախօսեն:  
Նորամուտ աշակերտաց ընդունելութիւնը կը սկսի օգոստոս 19էն,  
ամէն օր մինչև կէսօր:  
Հ. ԳԵՈՐԳ. Վ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ  
Վարիչ Վիեն. Միւիթ. Վարժարանի

### ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

### ԱՂԶԿԱՆՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

(ԳՕԼԷՃ)

Գիշերօթիկ եւ ցերեկեայ, 12 տարուան կատարեալ բնակարանով. 3 տարի  
մանկապարտէզ, (երկուս) տարրական դասընթացք (երկուս) միջին դասըն-  
թացք (միայն աղջկանց), բարձրագոյն եւ երկրորդական հինգ տարուան ըն-  
թացքով (միայն աղջկանց):  
Բազմաթիւ Պոլսեցի եւ գաւառացի աղջասէր ծնողաց առաջարկին վրայ,  
բացինք Սկիւտար-Իճատիէի կեդրոնին մէջ, օգոստոսն եւ բարձրագոյն բնակարան  
շէնքի մը մէջ մեր աղջկանց քարձրագոյն-երկրորդական վարժարանը, ուր  
աղջային եւ ընտանեկան ընտիր դաստիարակութիւն մը պիտի տրուի, ձեռն-  
հաս եւ սրբկեշտ հայ եւ օտարազգի ծանօթ ուսուցչաց ձեռնամբ: Բացի կրօ-  
նական եւ բարոյական ուսուցումէ եւ մայրենի լեզուէ, խնամով պիտի աւան-  
դուին թուրքերէն, ֆրանսերէն եւ անգլիերէն լեզուները բոլորովին նոր եւ  
մանկավարժական դրութեամբ, ինչպէս նաեւ ուսանողական, բնագիտական  
եւ բնապատմական, աշխարհագրական եւ պատմական ճիւղերը, գեղարուեստա-  
կան, ձեռարուեստի դասերը, ձայնական եւ գործիական երոժշտութիւն՝ բաղ-  
ձացուած եղանակաւ: Վարժարանը կը բացուի Սեպտ. 1ին եւ դասախօսու-  
թիւնները կը սկսին նոյն ամսոյն Ցին Բշ. օր:  
Կը հրահրուին Պատ. ծնողք եւ պաշտպանք մինչև 1 Սեպտ. դիմել  
արձանագրութեան համար Տնօրէնութեանս, որ ամէն օր մինչև կէս օր կը  
գտնուի իր բնակարանը Սկիւտար-Իճատիէ, Գայսէրի Օղլու փողոց թիւ 13:  
Պայմանք դիւրամատչելի: Հինգ աշակերտով դասարանները պիտի բացուին:  
Չափազանց օրիորդներ մասնաւոր ճիւղերու կրնան հետեւի:  
Հիմնադիր-Տնօրէն  
ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

### ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ

ԲԵՐԱ, ԵԼՇԻԼ ՓՈՂՈՅ ԹԻԻ 1

Ուսումնարանին քսաներորդ տարեշրջանը կը սկսի առաջիկայ Սեպտեմ-  
բեր 1/14, Երկուշաբթի օրը:  
Օսմանեան Սահմանադրութեան դպրոցական հաստատութեանց համար չնոր-  
հած աղատութեան ճշմարիտ գաղափարն եւ բազմաշահ աղբիւրութիւնն յօ-  
գուտ գործածելով եւ նոր կեանքին յարաբերութեանց նպատակալարմար  
պէտքերն աչքի առջև ունենալով, ներկայ տարեշրջանին մէջ օգտուէտ  
բարեօրիւններ պիտի ըլլան ի յառաջդիմութիւն Հայ մանկուոյն:  
Արձանագրութեան եւ մանրամասն տեղեկութեանց համար պատուական  
աղբայինք կրնան դիմել Տնօրէնութեան, ամսոյս 21 Հինգշաբթի օրէն  
սկսեալ առաւօտները մինչև կէսօր:  
Խնամակալութիւն

### ՀԱՅ. ՕՍՄ. ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ

Պատշտական, գիտական եւ այլ կարեւոր բառերու  
Ֆրանսերէնով եւ բազմաթիւ օրինակներով  
նոխացած իբր 50,000 բառ, ոն, ասուքիւն

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ  
ՊԵՏՐՈՍ ԷՃ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Կը վաճառուի կանխիկ 35 դր. Ի Պալենց գրատունը  
1-10

### ՎԱՐՃԱՐԱՆ ՔԵՐՅ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ

Ի ԲԵՐԱ, ՉԷՄԷՆ ՓՈՂՈՅ

Վարժարանիս բացուած տեղի պիտի ունենայ առաջիկայ Սեպտեմբեր 1ին:  
Ներքին եւ արտաքին աշակերտունեաց արձանագրութեանց համար դի-  
մել վարժարանիս Վարչութեան, ամէն օր մինչև կէսօր:  
Վարժարանիս մասնաճիւղերը, ի Բանկալթի, Գառըգիւղ եւ Սամաթիա  
կը բացուին նոյնպէս Սեպտեմբեր 1ին:  
1-5 Վարչութիւն Վարժարանի

Մանկարեւի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,  
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ  
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցա-  
նէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ  
տաղտուկի աղբիւր մըն է:  
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

### Ս Ի Ն Կ Է Ր

Հայրայրից ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ The Singer Manufacturing Co  
մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամէնէն աւելի կատարելա-  
գործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բո-  
վանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:  
Ձեռքի, ոտքի, ու ոտքի եւ ձեռքի միանգամայն  
մեքենաներ կը գտնուին  
ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Բնկերութեան  
վաճառատանց մէջ  
ԲԵՐԱ { 1. Մեծ փողոց, Պոն Մառչիի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.  
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին գէմ.  
ԿԱԼԱԹԱ { 1. Սինկեր խան, Թրակէլին ետեւը.  
2. Գառըգէոյ, Թրակէլին կայարանին դէմ.  
ՊՈԼԻՍ { 1. Սուլթան Համամ, Թ. 2  
2. Սուլթան Պէյազիտ, Թրակէլին կայարանին դէմ, Թ.  
ՍԿԻՏԱՐ { 2 արշր Պոյու, Թ. 120.

### ՇԱՐՄԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Գասերը եւ նորոգութիւնք ձրի.  
Կասարեալ երաշխաւորութիւն:  
Մասաճիւղիք գաւառաց բոլոր քաղաքներուն մեջ:  
Սինկերի Բնկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ  
Փողոց, Թ.Ն 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տր. զօղլուի տունը:

### Ս. Պ Ա. Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆՍԺԱՄ ԿԱՄ ԱՆՊՈՅՄԱՆ ԱՊՍՈՒԿ  
5000Է ԱԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԷՆԷ 5000

Տեղական եւ Բարիդի 14 եւ 18 աստիճան ոսկոյ վրայ բաղմա-  
տեսակ գոհարեղէններ, օղ, մասնի, ասիդ, կայն. նաեւ անուշ-  
նեբու սկզբնատաւով գոհարաղարք մատանիներ, ոսկի, արծաթ  
ժամացոյցներ եւ նորածեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի  
յատուկ պատրաստ եւ չափու վրայ զգեստներ, կոշիկներ ու գըլ-  
խարկներ, արանց, կանանց եւ տղայոց համար: Նաեւ մուշամպա  
վերարկուներ, բուրդէ եւ մետաքսէ շրջազգեստի կերպաններ, պատ-  
րաստ ձեռնակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, կայն, եւ  
զարդի վերարեւել պիտոյք, մեքենաներ՝ լուսանկարի, կրամօֆօն,  
ինչպէս նաեւ կարի (Ճօնս, Նովման) կայն:  
Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կա-  
կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի եւ խոհանոցի վե-  
րարեւել ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղ-  
նիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ եւն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չափած է հան-  
րութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանքաց տո-  
կունութիւնը, նրբութիւնը եւ ամանութիւնը:  
ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ  
Կանխիկ գնողին % 5 զեղչ  
Շարքախան եւ արեսական վճարմանց հաւար  
հաւաքիչներ միշտ պատրաստ են:  
Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ վաճառատուն  
Մեծ Եռկայ, Ոսկերչաց Մեծ Փողոց թիւ 13,